



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՆՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
 հեռ. /+374/ 232- 3-10-26, ashtarak.aragatsotn@mta.gov.am



26.09.2019թ., թիվ 1812

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁ

Հարգելի բարեկամներ

Ուրախ եմ ձեզ ողջունելու և իմ ուղերձը հղելու ձեզ՝ Հույն-Ռուս-Հայ բարեկամության <<E.R.A.>> միության կողմից կազմակերպված էդմոնդ Քեոսայանի մահվան 25-րդ տարելիցին նվիրված մեծարման երեկոյի մասնակիցներիդ: Թեև առիթը տխուր է, բայց պետք է նշեմ, որ մեծ արվեստագետի կատարած աշխատանքները հավերժ են, մնայուն ու նաև ուսանելի:

Ռեժիսորը բնակվել է Աշտարակի տարածաշրջանում և Աշտարակից ունենալով բազմաթիվ ընկերներ, մասն է եղել մեր կենցաղի, հյուրասիրության և մարդկային փոխհարաբերությունների:

Մեզ համար մեծ պատիվ է, որ նրա կողմից ստեղծված <<Երբ գալիս է սեպտեմբերը>> ֆիլմի գլխավոր հերոս, աշտարակցի Լևոնը, մարմնավորում է իսկական աշտարակցուն՝ հյուրասեր, ինքնասածի, չընկճվող ընտանիքն ու ընտանեկան արժեքները գնահատող, ընկերասեր, բարին ու լավը կիսող բնավորությամբ մի մարդու, որի ամեն մի խոսքը խրատ է, բարի ցանկություն ու ապագայի հանդեպ վստահություն:

Երբևէ պատկերացրել եք, որ հնարավոր է բազմահարկ շենքի պատշգամբում խորոված պատրաստել: Իհարկե ոչ: Աշտարակցի Լևոնի կողմից ֆիլմում իսկական աշտարակյան խորովածի մաստեր կլասս է արվում: Շատ շատերը Հայաստանում, սփյուռքում և խորհրդային միության երկրներում, հայկական խորոված անելը սովորել են <<Երբ գալիս է սեպտեմբերը>> ֆիլմի հենց այդ տեսարանից:

Ես, որպես Աշտարակ համայնքի ղեկավար, հպարտ եմ, որ իմ բնօրրանը հանդիսացել և շարունակում է մնալ լավագույն ավանդույթների շարունակողը: Որ Աշտարակն այն մոգական ուժն է, որով արտահայտվում է մարդու մեջ թաքնված հնարավորությունների բացահայտումը:

Ի դեպ նշեմ, որ այսօր՝ սեպտեմբերի 30-ին լրանում է հայ գրչարվեստի գոհարներից՝ մեր հայրենակից Գևորգ Էմինի ծննդյան 100-ամյակը, որի ստեղծագործությունների ներշնչողը էլի աշտարակյան է:

Ողջունում եմ Հույն-Ռուս-Հայ բարեկամության <<E.R.A.>> միության նմանատիպ նախաձեռնությունները, որոնցով ամրապնդվում են մեր 3 ժողովուրդների բարեկամությունն ու միասնական լինելը ու ապացուցվում դրա վաղեմությունը:

Լավագույն ցանկություններով՝

Աշտարակ համայնքի ղեկավար՝



Թովմաս Շահվերդյան